

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ դատական դեպարտամենտի պրակտիկայի ամփոփման  
և վիճակագրության վարչության պրակտիկայի ամփոփման  
բաժնի մասնագետ,  
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի  
ինստիտուտի հայցորդ

## ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Սույն հոդվածում հանգամանորեն լուսաբանված են պաշտոնատար անձանց կողմից արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների բնութագրական հատկանիշները և դրանց քրեաիրավական որակման հետ կապված հարցերը: Քննարկվող հանցագործությունների բնութագրիչ հատկանիշներից մեկն այն է, որ դրանք կատարվում են հենց արդարադատություն իրականացնող կամ արդարադատության իրականացմանը նպաստող (օժանդակող) իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից: Փաստորեն այս հանցագործությունների սուբյեկտները հատուկ սուբյեկտներ են և որպես այդպիսիք կարող են հանդես գալ նշված մարմինների որոշակի պաշտոնատար անձինք:

*Հիմնաբառեր- հատուկ սուբյեկտ, պաշտոնատար անձ, հանցագործություն, արդարադատություն, արդարադատությանը օժանդակող մարմիններ, իրավապահ մարմիններ:*

Իրավական և ժողովրդավարական պետության կայացման հետ անհամեմատելի է պետության իշխանության ներկայացուցիչների կողմից մարդու և քաղաքացու դեմ հանցանքների կատարումը: Այս տեսակետից իշխանության ներկայացուցիչների կողմից կատարվող այնպիսի հանցանքներ, ինչպիսիք են ակնհայտ անմեղ անձինքրեական պատասխանատվության ենթարկելը, ապացույցների կեղծումը, ցուցմունք տալուն հարկադրելը, ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը և այլն, ոտնձգում են ոչ միայն արդարադատության, այլև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների դեմ: Հետևաբար, քննարկվող հանցագործությունների օբյեկտ են հանդիսանում ոչ միայն արդարադատություն իրականացնող մարմինների նորմալ գործունեությունը, այլև մարդու իրավունքներն ու ազատությունները: Բացի այդ, նշված հանցագործությունները նսեմացնում են իշխանության հեղինակությունը:

Քննարկվող հանցագործությունների բնութագրիչ առանձնահատկություններից է նաև այն, որ դրանք կատարվում են հենց արդարադատություն իրականացնող և արդարադատության իրականացմանը նպաստող իրավապահ մարմինների ներսում, դրանց աշխատակիցների կողմից: Փաստորեն, այս հանցագործությունների սուբյեկտները հատուկ սուբյեկտներ են. որպես այդպիսիք կարող են հանդես գալ նշված մարմինների որոշակի պաշտոնատար անձինք: Քանի որ նշված հանցագոր-

ծությունները պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների հստակ դրսևորումներ են, ուստի կարող ենք ասել, որ այստեղ գործ ունենք հատուկ նորմերի հետ: Նմանատիպ արարքների կատարումը այլ պաշտոնատար անձանց կողմից որակվում են որպես պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ (պաշտոնեական լիազորությունների չարաշահում, պաշտոնեական լիազորությունների անցում և այլն):

1) Ակնհայտ անմեղ անձինքրեական, պատասխանատվության ենթարկելը (քր. օր.-ի հոդված 336-րդ):

ՀՀ քր. օր.-ի 336-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ակնհայտ անմեղ անձինքրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Անձի անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ Սահմանադրությունը ամրագրել է մի շարք երաշխիքներ: Այսպես, ՀՀ փոփոխված Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է»: Իսկ Սահմանադրության 67-րդ հոդվածը ազդարարում է, որ. «Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք,

2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք,

3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք,

4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև որ իր օգտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք,

5) թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք, եթե նա չի տիրապետում հայերենին»:

Բերված սահմանադրական դրույթներից կարելի է եզրակացնել, որ քննարկվող հանցագործության սուբյեկտները (քննիչը, դատախազը) իրենց հանցավոր որոշումներով ռոնահարում են նաև վերոնշված սահմանադրական դրույթները:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է չհաստատված հանցագործության դեպքով կամ առանց դեպքին անձի մասնակցությունը հիմնավորող, կամ ոչ բավարար չափով հիմնավորող, կամ առանց նրա արարքում հանցակազմը հավաստող փաստական տվյալների առկայության անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մեջ:

Անձը համարվում է անմեղ, եթե բացակայում են նրան քրեական պատասխանատվության ենթարկելու փաստական և իրավաբանական հիմքերը: Փաստական հիմքեր են հանդիսանում հանցագործության դեպքը և տվյալ անձի մասնակցությունը հանցագործությանը, իսկ իրավաբանական հիմք է հանդիսանում քրեաիրավական նորմով ամրագրված հանցակազմի առկայությունը:

Հնարավոր են իրավիճակներ, երբ հանցանք կատարած անձը այս կամ այն պատճառով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից (օրինակ՝ վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով, համաներման ուժով կամ

քրեական օրենսգրքով սահմանված այլ հիմքերի առկայության դեպքում): Նման պայմաններում անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չպետք է որակվի որպես ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկել, որովհետև անձը իրականում հանցանք է կատարել: Այլ է իրավիճակն այն դեպքերում, երբ անձի կատարած հանցանքն ապաքրեականացվում է: Մեր կարծիքով, նման դեպքերում անձին քրեական պատասխանատվության ենթարկելը պետք է որակել որպես ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկել, որովհետև նրա կատարած արարքն այլևս հանցագործություն չէ:

Քննարկվող հանցագործության որակման համար կարևոր նշանակություն ունի հանցագործության սուբյեկտիվ կողմը: Հանցագործությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը պետք է գիտակցի, որ քրեական պատասխանատվության է ենթարկում անմեղ անձի: Այսինքն՝ քրեական պատասխանատվության ենթարկվողի անմեղությունը պետք է ակնհայտ լինի հանցավորի համար: Պետք է նշել, սակայն, որ քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմի հավաստումը բավականաչափ դժվար է, քանի որ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը կարող է հանցավորի կողմից բացատրվել (կամ իրականում հետևանք լինել) ապացույցների սխալ գնահատմամբ, օրենքի սխալ մեկնաբանությամբ և այլն, որոնց դեպքում քննարկվող հանցակազմը բացակայում է:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է. որպես այդպիսին հանդիսանում են քննիչը և դատախազը:

ՀՀ քր. օր.-ի 336-րդ հոդվածի երկրորդ մասում որպես հանցագործության ծանրացնող հանգամանք նախատեսված է անզուրկությամբ ծանր հետևանքների առաջացումը, իսկ երրորդ մասում՝ դիտավորությամբ ծանր հետևանքների առաջացումը: Ծանր հետևանքներ կարող են համարվել երկար ժամկետով անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքի կիրառումը, անձի ծանր հիվանդությամբ հիվանդացումը, ինքնասպանությունը, հետագայում անձի դատապարտումը:

ՀՀ քր. օր.-ի 336-րդ հոդվածի չորրորդ մասում որպես առավել ծանրացնող հանգամանքներ են նախատեսված նույն արարքի կատարումը՝ 1) զուգորդված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելու հետ, 2) մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելու հետ: Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների հասկացությունը տրված է քր. օր.-ի ընդհանուր մասում: Ինչ վերաբերում է մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելուն, ապա

դա դիտավորությանը այնպիսի ոչ հավաստի, կեղծ տվյալների ստեղծումն է, որոնք կարող են ընդունվել որպես մեղադրանքի ապացույցներ:

Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը կարող է զուգորդվել այլ հանցանքների կատարմամբ՝ ցուցմունքներ տալուն հարկադրելով, ապօրինի ձերբակալելով կամ կալանավորելով: Նման դեպքերում արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ:

3) Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելը (քր. օր-ի հոդված 341-րդ):

ՀՀ քր. օր-ի 341-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու համար:

Քրեական գործի քննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության երաշխիքներից մեկը ցուցմունքներ տալու կամավորությունն է: Ցուցմունքներ տալուն հարկադրելու հանրային վտանգավորությունը դրսևորվում է նրանում, որ հաճախ դրա արդյունքում հանցագործության մեջ մեղավոր են ճանաչվում անմեղ անձինք, իսկ իրական մեղավորները մնում են անպատիժ: Սակայն ցուցմունքներ տալուն հարկադրելու հանրային վտանգավորությունը միայն վերը նշված հանգամանքով չի արտահայտվում: Եթե նույնիսկ ցուցմունքներ տալուն հարկադրելու արդյունքում ձեռք են բերվում իրականությանը համապատասխանող տեղեկություններ, և հանցագործությունը բացահայտվում է, միևնույն է, ցուցմունքներ տալուն հարկադրողի արարքը համարվում է հանցավոր: Հասարակությունը շահագրգռված չէ նրանում, որպեսզի մի հանցանքը բացահայտվի մեկ այլ, հաճախ առավել վտանգավոր հանցագործության միջոցով:

ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշված հոդվածի հետ ուղակիորեն աղերսվում է ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներ՝ 50-րդ, 65-րդ, 66-րդ, 67-րդ: Մասնավորապես Սահմանադրության 50-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառու-

թյամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»:

Զննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը բաղկացած է իրար հետ կապված երկու մասերից՝ որոշակի ցուցմունքներ տալու պահանջ և ցուցմունք տվողի նկատմամբ ապօրինի հարկադրանքի միջոցների կիրառում:

Հարկադրանքը ցուցմունք տվողի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ներգործությունն է, որի արդյունքում վերջինս ստիպված, իր կամքին հակառակ ցուցմունքներ է տալիս:

Օրենքում թվարկված են ցուցմունքներ տալուն հարկադրելու անօրինական եղանակները՝ սպառնալիքի գործադրում, այլ ապօրինի գործողություններ:

Ընդհանրացնելով այլ ապօրինի գործողությունների հասկացությունը՝ կարելի է նշել, որ դրանք այն գործողություններն են, որոնք գրկում են անձին իր կամքով գործելու (ցուցմունք տալու) հնարավորությունից կամ սահմանափակում են իր արարքները ղեկավարելու նրա հնարավորությունը:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ ինքը հարցաքննվողին հարկադրում է ցուցմունք տալ անօրինական հնարքներով: Հանցագործության շարժառիթը և նպատակները արարքի որակման համար նշանակություն չունեն:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է: Այդպիսին են հանդիսանում դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննություն կատարող անձը:

ՀՀ քր. օր-ի 341-րդ հոդվածի երկրորդ մասում նախատեսված են քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքները՝ հանցանքի կատարումը հոդվածում նշված անձանց նկատմամբ ծաղրուծանակով, խոշտանգումով կամ այլ բռնությամբ:

Եթե խոշտանգման կամ բռնության գործադրման արդյունքում տուժողի առողջությանը ծանր վնաս է հասցվել, արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ քր. օր-ի 341-րդ հոդվածի երկրորդ մասով և որպես ծանրացուցիչ հանգամանքներում առողջությանը ծանր վնասի պատճառում՝ քր. օր-ի 112-րդ հոդվածի (համապատասխան հատկանիշների առկայության դեպքում քր. օր-ի 112-րդ հոդվածի երկրորդ մասի չորրորդ կետով՝ առանձին դատախազությամբ առողջությանը ծանր վնասի պատճառում): Եթե նշված գործողությունների արդյունքում տուժողը մահանում է, ապա արարքի որակումը պետք է կատարվի մահ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վան նկատմամբ հանցավորի դրսևորած մեղքի ձևի հաշվառմամբ՝ քր. օր.-ի 341-րդ հոդվածի երկրորդ մասով և 112-րդ հոդվածի երկրորդ մասի 14-րդ կետով՝ մահվան նկատմամբ անզգուշություն դրսևորելու դեպքում, կամ քր. օր.-ի 341-րդ հոդվածի երկրորդ մասով և քր. օր.-ի 104-րդ հոդվածի համապատասխան մասով (կետով)՝ մահվան նկատմամբ դիտավորություն դրսևորելու դեպքում:

ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածի երրորդ մասը՝ որպես հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքների ծանրացնող հանգամանք է նախատեսում ծանր հետևանքների առաջացումը: Ծանր հետևանքներ կարող են համարվել ան-

մեղ անձին ազատագրկման դատապարտելը, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելը, կալանքի տակ երկար ժամանակ մնալը, անձի ինքնասպանությունը, ծանր, այդ թվում հոգեկան հիվանդությամբ հիվանդացումը, անձի աշխատանքային, բնակարանային կամ այլ կարևոր իրավունքների խախտումը, խոշոր չափերի նյութական վնաս պատճառելը, անձի ընտանիքի համար ծանր հետևանքների առաջացումը և այլն:

**Արսյոն Մանուկյան**

Специалист отдела обобщения судебной практики управления обобщения судебной практики и статистики судебного департамента РА, соискатель института философии, социологии и права Национальной Академии наук РА

### ՔԵԶԻՕՄԵ

#### *Характерные черты преступлений, совершенные должностными лицами против правосудия*

В данной статье подробно рассмотрены характерные черты преступлений, совершенные должностными лицами против правосудия, а также вопросы, связанные с их уголовно-правовой квалификацией. Характерной чертой рассматриваемых преступлений является то, что они совершаются именно со стороны служащих органов, осуществляющих правосудие, или содействующих осуществлению правосудия правоохранительных органов. То есть, субъекты данных преступлений являются специальными субъектами и в качестве таковых могут выступать определенные должностные лица указанных органов.

**Ключевые слова:** *специальный субъект, должностное лицо, преступление, правосудие, органы содействующие правосудию, правоохранительные органы.*

**Harutyun Manukyan**

Specialist of the Division of Summarizing of Judicial Practice of the department of summarizing of judicial practice and statistics of the RA judicial department, Research Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law National Academy of Sciences of the Republic of Armenia

### SUMMARY

#### *Characteristic features of crimes committed by state officials against justice*

In this article the characteristic features of crimes committed by state officials against justice, as well as issues related to their criminal-law qualification are studied in details. The characteristic feature of this group of crimes is that they are committed precisely by the officials of the bodies administering justice or law enforcement bodies, promoting the administration of justice. So, the subjects of these crimes are special subjects and, as such, can act certain state officials of the mentioned bodies.

**Keywords:** *special subject, state official, crime, justice, bodies promoting justice, law enforcement bodies.*